

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.— Ռուսիոյ Զարն.— «Իրաւունք» լրագիրն.— Հայքի հիմ աշխատակիցն.— Գործօմ.— Քաղաքական փորձառութիւնն հայոց.— Կնոջ քաղաքականութիւնն և այր մարդու քաղաքականութիւնն.— Ինքնապաշտպանութիւնն հայոց.— Վիճակագիրք Ամերիկայի հայոց.— Անգլիկէնի դասեր մոր ուսանողներուն համար.— Հայքի թղթակցութիւնք.— Այլևայլք.

ԽՄԻՆԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐԿ

ՌՈՒՍԻՈՅ ԶԱՐՆ

Ռուսիոյ Նիկողայոս Բ. կայսրն նոր նշաններ կուտայ իւր ազատամտութեան: Իւր գահակալութենէն ի վեր երկրին Հըրէայք հանգիստ են: Հիմա Բոլոնեացիներն ալ եղ ու մեղր են Ռուս կառավարութեան հետ որ թոյլ կուտայ Բոլոնէնի ազատ ուսումը: Բովանդակ Ռուսիոյ մէջ հանրային ուսուցումը վերակազմելու ձեռնարկուած է վերջերս և կրթութիւնը տիեզերական և ստիպիչ պիտի դառնայ մոսկովեան կայսրութեան մէջ ինչպէս է ի Թրանսա և այլ քանի մը երկրաց մէջ: Ժողովրդի կրթութեան և լուսաւորութեան համար կայսեր այս հոգածութիւնը աներկբայեալ ապացոյց մ'է թէ նա ի մտի ունի քաղաքական կարգի ազատու-

թիւններ ալ հաստատել: Ներկայ Զարին օրով Ռուսիա շատ պիտի լուսաւորի, կը յուսանք, որուն պիտի հզօրապէս օժանդակէ Փռանորդաւոր Նիզակակցութիւնը:

Միթէ այսպիսի մեծախոհ կայսր մը, որպիսի է Նիկողայոս Բ., կրնայ անտես անել իւր հայ հաւատարիմ հպատակաց արդար իշխանը:

Մինչդեռ մեր ցնորամիտները ուրարկութեամբ կը զրադին, ինչպէս կը լինի որ արտասահմանի Հայերը ընդհանուր աղերսագրով մը չեն դիմեր Ռուսիոյ բարի և լուսամիտ կայսեր՝ նորա գթութիւնը հայցելու Գաղանին ճիրանանց մատնուած անմեղ Հայաստանի վրայ:

«ԻՐԱՒՈՒՆԻ» ԼՐԱԳԻՐԸ

Հասած է այն եզրակացութեան թէ «Հայ Յեղափոխութեան վերջին գործը», այսինքն դաշնակցականաց ռումբ պայթեցնելը, հարկաւոր էր, զի անոր շնորհիւ «Հայկական խնդիրը որ մաղմաղի տակ ծածկուած կայծ մըն էր՝ յանկարծ բռնկեցաւ»: Տոյցը պարտաւորներուն և ցոյցը անողներուն փաստերը կը յիշէ, կը կշռէ և սուպէս կը վերջացնէ իւր յօդուածը. «Այս երկու հակառակ տեսութեանց վերջինը (ցոյց անողներունը) մեզ

կը թուի հիմնական և վեհանձն։»

Կը ցաւինք որ «Իրաւունք», զգօնութեան շաղէն բաւական ընթացած լինելէն վերջը՝ ինկած է մինչև ի համախոհութիւն դաշնակցական կամ հնչական խօթամիտներու։

Յոյցը ժամու էր թէ վաղաժամ։

Յոյցը, իբրև ցոյց գոնէ, յաջող էր թէ խայտառակ։

Մինչև ցարդ եղած բոլոր ցոյցերուն գործիչները ինչ տեսակ մարդիկ էին, անձնուէր թէ իրենց կաշին ազատելու հոգով լեցուած։

Մինչև ցարդ եղած ցոյցերուն արդիւնքն ինչ եղած է, չա՛հ թէ մնաս հայ հանրութեան։

Հայոց համար ապահովութիւն բերող բարեկարգութիւններ կրնան ներմուծուիլ այժմ ի Թուրքիա, մինչ յունական խնդիրն անլոյծ կը մնայ և Տէրութիւնք պատերազմէ կը խորշին ահիւ։

Ինպաւո՞ւ Հայոց Եւրոպական արդիւնաւոր միջամտութիւն մը պիտի կրնայ լինել կա՛մ ի քաղաքական հարկէ կամ մարդասիրական շարժառիթով. արդ այսպէս ուսմբ պայթեցնելը կարող է ծնունդ տալ քաղաքական հարկի կամ մարդասիրական շարժառիթներու։

Այս հարցմանց պատասխաններն կը յուսանք «Իրաւունքի» խմբագիրն կարող է ինքն իրեն տալ։

Պատրիարք Օրմանեան Սուլթանէն առանձին ունկնդրութեան ընդունուած է նորա տարեդարձին առթիւ։ Սրբազանը շնորհակալութիւն յայտներէ ազգին կողմէն և խայիֆը պատասխաններ է թէ ինքը գոհ է հայ ազգէն, որոյ ծոցին մէջ կան թէպէտ անկարգ և չար ոմանք, բայց հայ ազգին ընդհանուր բնաւորութեանը արատ մը չեն կրնար համարուիլ, զի ամեն ազգի մէջ կը գտնուին չարաբարոյ որեւոր (ինչպէս Թրքաց ազատամիտները)։ Փատիշահը յայտարարած է թէ ինքը պիտի աշխատի իւր բոլոր հպատակաց բարօրութեանը, մասնաւորապէս՝ Հայոց։

Կը փափաքէինք լսել թէ Օրմանեան Պատրիարք մերժեր է Սուլթանին պատուանշանը, առարկելով թէ ինքը արժանի չէ այդպիսի պատուոյ մը (անպատուութեան)։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Մեծտոր Անգլիերէժ Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց

Տիգրան Մ. Պետիկեան

Նիւ Եորք, 1897։

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ։ Եթէ հազար բառ կայ։

Դինն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք։

Դիմել առ ՀԱՅՔԻ Խմբագիրն

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չղրդին գիրք չենք կրնար յղել։

Հայքի խմբագրութեան աշխատակիցներէ մին, Տիար Գործօն Հայաստանէն վերադարձած է Ամերիկա և կը յղէ մեզ իւր առաջին յօդուածը, նիւթ ունենալով «Հայոց ինքնապաշտպանութիւնը»։ Ուրախ ենք որ կոտորածի ատեն երկրին մէջ գտնուած և Հայոց ինքնապաշտպանութեան անձնուէր գործիչներէն մին կուգայ ապացուցանել թէ Հայք «դարբն է ի վեր կոխտուած են բայց չեն ճմլուած, գերի բռնուած են բայց չեն ստրկացած», և իրենց ազգային արիւթիւնն ու քաջութիւնը պահպանած են։

«ՀԱՅՔԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Տեար Ս. Թ. — Ճիպով իլ, Աւիրիկէ. — Ձեր երկու ապահովագրեալ նամակներն ընդունեցայ։ Մենտորէն, Քր. Հայաստանէն և Մարգարանէն մէկ մէկ օրինակ յղեցի ձեզի ի մի ծրար։

Բար. — Ձուիցերիա. — Ձեր հարցմանց հանրային կարեւորութեան պատճառ՝ պիտի պատասխանեմ Հայքի յաջորդ թուով։ Թերթս պիտի յղուի ձեզի կանոնաւորապէս։

ՁԳՕՆ, Լօրէնս. — Ձեր նամակը չեմ կրնար հրատարակել վասն զի ձեր բուն անունը չէք հաղորդած ինծի իբրև տեղեկութիւն։

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱՆԿԱՆ ՓՈՐՁԱԹՈՒԹԻՒՆԸ

ԿՆՈՋ ՔԱՂԱՔԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՅՐ ՄԱՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւրոպայէն խաբուեցանք, Սուլթանէն խաբուեցանք, մեր ժողովուրդը խաբուեցաւ, մեր առաջնորդներն ալ խաբուեցան—հիասթափութիւնը սկսած է, և ազգակը գրեթէ ընդհանուր բայց չմոռնանք սա էական իրողութիւնը թէ մեք, Հայքս, բոլորովին անփորձ էինք քաղաքականութեան մէջ, և զարմանալի չէ որ մեր առաջին քայլափոխներով ինկանք ի խորխորատ:

Հայը քաղաքական կեանք ունեցած չէր դարերէ ի վեր. Պէտլիի դաշնագրէն ի վեր միայն է որ քաղաքական մտածում սկսած է մեր մէջ:

Եւ բնական էր որ մեր քաղաքական մտածումներն անգործնական, Հայեցողական Հանդամանք ունենային գրող դասակարգին մէջ, իսկ լոկ զգացական՝ հասարակ ժողովուրդին մէջ:

Իրօք, Նազարպէկեան և Դրօշակեան գրողներն ու գործիչները, Հայաստանի իրաց քիչ ծանօթ, աւելի տեսական, բարձր, սօցիալական Հաւասարութեան խնդիրներով ոգևորուած էին: Այդ մեծ ու վեհ սօցիալական վիճակին Հասնելու Համար, իրենց տեսակետով, անհուն զոհողութիւն յանձն առնուլ կ'արժէր, մինչև իսկ կ'արժէր Հայ ազգը զոհել այդ գերազանց գաղափարին...

Դա էր մեր կովկասցի անփորձներուն Հաւատալիքը: Իսկ Թրքահայոց ցաւը, զգացումը աւելի ուղղակի կը բղխէր իրական կեանքի փորձառութենէն, իսկ քաղաքական յայտերն և տեսութիւններն հիմնուած էին կիսկատար ըմբռնուած կամ բոլորովին թիւրիմաց գաղափարներով վրայ նկատմամբ Եւրոպիոյ քրիստոնէութեան և Տէրութեանց դիւանագիտական սկզբանց: Մեք պարզ, քրիստոնեայ ժողովուրդ, Եւրոպիոյ վրայ հիացեալ, նորա փառաւոր Հետոցը Հետեւելու նախանձաւոր, Հեռի՛ էր մենէ ենթադրել թէ կամովին կամ անխոհմութեամբ պիտի կըր-

նար մեր պանծալի Եւրոպան գրգռել Գաղանը զոր գսպելու հարկը քաջ գիտէր, և անտարբեր կամ անգօր հանդիսատես պիտի լինէր երբ անոր ճիրանանց մէջ փարատուէր մեր խաբուած ժողովուրդը:

Մեր ցաւերը այնքան անտանելի էին, և մեր ազատութեան ծարաւը այնչափ սաստիկ, որ բնականապէս կը կարծէինք թէ Եւրոպա չէր կրնար անկարեկիր լինիլ, մինչև իսկ եթէ միայն գոյզն չափով համակրէր մեր ցաւոց:

Իրողութիւնք ցրեցին մեր այս կարծիքը: Հասկցանք թէ Եւրոպա, այսինքն Եւրոպական դիւանագիտութիւնը, զգացումի հետ գործ չունի, այլ հաշիւ միայն գիտէ—հաշի և փաստի հաշիւ, իւրաքանչիւր ազգ իւր տեսակետէն:

Մինչ բիւրաւոր անմեղ Հայեր ամիսներով կը հալածուէին, կը կողոպտուէին ու կը մորթուէին, դիւանագէտներ չէին հառաչեր. «ո՛հ, ինչ սարսափելի ոճիր, չենք կրնար հանդուրժել այս տեսարանաց» իշխաններ չէին գոչեր «ի պատերազմ ընդդէմ մեծ Մարդասպանին» այլ ամենքը զբաղած էին Հաշուելու թէ իրենց ինչ փաստ ունէր Հայոց մորթուիլը—ոչ մի փաստ. և ինչպիսի մեծ պատերազմի մը վտանգ կը ծագէր եթէ միջամտէին:

Եւրոպայինը Հաշիւներու քաղաքականութիւն էր, այր մարդու, վաճառականի, շուկայի, գործի քաղաքականութիւն. իսկ մերը՝ ազնիւ զգացումի, կնկան, ընտանեկան քաղաքականութիւն: Մեք խաբուեցանք անփորձ և սրբախոհ կնկան մը պէս. Թուրքը որ մեր առջեւ իյնալու, ստորնանալու կը միտէր, Հեծաւ մեր վրայ շնորհիւ Եւրոպիոյ անզգամ թոյլտուութեանը ի՞նչ է փորձառութեան դասը:

Դադրի՞նք զգալէ, հրաժարի՞նք մեր սուրբ դատէն. ո՛չ:

Թող ժողովուրդը զգայ, խորապէս զգայ իւր ցաւերը, թող իւր ցաւերուն վրայ թափի արդար վրէժխնդրութեան մը զգացումը, յոյսը, թող լինի մոլեռանդ քրիստոնեայ և մոլեգին թրքատեաց. արդէն ուրիշ բան լինիլ անհնար է նմա: Բայց թող զգացումը չվարէ մեր գործնական քաղաքականութիւնը. թող գրեթե սօցիալական ոլոր մոլոր գաղափարօք ոգեւորեալ թեթեւամիտներ չղեկավարեն ազգային ճակատագիրը:

Թող գրէ ո՛վ որ ունի գրելիք, թող խօսի և մխիթարէ եկեղեցականը, թող վառ մնայ ազգային պայքարում: Բայց թող գործնական քաղաքականութեան մէջ վարժ, դիւանագիտական փորձառութիւն ունեցող Հայեր լինին գործնականին մէջ առաջնորդ: Ասել կ'ուզեմ նուպար Փաշայի պէս մարդիկ:

Այս կրնայ մեր երիտասարդաց ոմանք Հայհոյութիւն թուիլ. բայց կը յուսամ թէ բանիմաց Հայերը կը հասկնան միտքս — թէ գործնականին մէջ, Եւրոպիոյ հետ մէկ կողմէն ու Դրան հետ միւս կողմէն ըստ արժանոյն վարուիլ գիտնալու համար հարկ է որ զգացումով և թէորիով ո՛չ՝ այլ հաշուով և խորագիտութեամբ գործելու սովորած դիւանագէտներ լինին մեր առաջնորդները:

Հիմա մեր բոլոր ազգը, ամեն գրող ու մրող, ամեն երիտասարդ, ամեն Հայ դիւանագէտ է, գաղափար ունի, համուզում ունի, կը վիճի, վերացական թէորիի համար իրարու կը բարկանան, զիրար կ'անիծեն ու կը ծեծեն իսկ, և այս կերպով կը կարծեն թէ գործը յառաջ կ'երթայ: Մինչև որ կեդրոն մը, ոչ իրարու գլուխ թէորիի համար պատուողներու, այլ փորձառու և դիւանագէտ գործիչի մը ղեկավարութեան տակ գործող կեդրոն մը չհաստատենք, մեր գործը չպիտի յաջողի: Այս առաջարկը կը յանձնեմ մեր «Միութիւն» քարոզողներու և ամենայն Հայրենասիրաց անմիջական ուշադրութեանը:

ՄԵՐ ԶԵՐԸՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գաւալարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորին ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, չրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱ-ԳԻՏԱԿԱՆՔ»: Այս գիրքն կարգաւ և ըստ այնմ իրենք գիրենք մարզել պարտին մեր երիտասարդք: Գին 50 սէնթ:

ԻՆԲԵՆԱՊԵՇՏՊԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Ամեն անգամ որ Հայ ազգը Եւրոպիոյ ներկայացուի, իբր դարաւոր գերութեան լծոյն տակ ծռած և ցածցած կը նկատուի, և իւր անզօր իւր գլուխը միւսանգամ վեր վերցնելու: Մեք կ'ուզենք վերջին դէպքերով ցուցնել թէ Հայոց գերութիւնը մարմնաւոր եղած է և ոչ հոգեւոր:

Ամենաչնչին անասնիկէն սկսեալ մինչև առիւծը՝ ամեն կենդանի ինքզինք կը պաշտպանէ մահուան դէմ. եթէ կայ ազգ մը որ ինքզինք չի պաշտպաներ, նա արդէն մեռած պէտք է համարուի:

Արդեօք Հայ Ազգը իւր վերջին աղէտներուն ատեն ի՞նչպէս վարուեցաւ. ատկէ կրնան իմանալ թէ ունի՞ կենսականութիւն:

Ես ամեն քաղաքի ջարդերուն ընդարձակ տեղեկագիրքը չունիմ, բայց գիտցածներէս կրնամ հետեցնել ապացոյցը: Եւ սա է որոշապէս ասելիքս թէ Հայք ոչ խարի պէս չմորթուեցան այլ ինքնապաշտպանութեան դիմեցին: Զարդերէն առաջ կ'առնեմ ունէին և երբ կոտորածը երկրին մէկ կողմը սկսաւ, ամեն տեղ փութով պատրաստեցին Հայք դէնք ու ռազմամթերք և այլն, և զայնս ի կիր առին ջարդի ատեն՝ թէ և ինչ ինչ զգուշութիւններով:

Կիտիին քաղաքը պատուաւոր յիշատակութեան արժանի է. Կիւրինի Հայք քաղաքէն դուրս ելան իրենց դէմ եկող ահագին խուժանին հետ մարտնչելու, եւ երեք օր կռուեցան քաջութեամբ և խուժանը յուսահատեցուցին, որ ապա ուրիշ Հնարք մտածեց:

ՈՒՐՖԱՅԻ Հայութիւնը ամենաքաջերէն մին եղաւ: Նորա սրտոտ և խիզախ դիմադրութեան առջև հաւատացելոց խաժամուժը և զօրքը ստիպուեցան կոտորածը դադարեցնել, և խաբէական միջոցներու դիմել:

ԱՅՆԹԱՊԻ ջարդը բաղադատաբար թեթեւ եղաւ այն պատճառաւ որ կոտորածին օրը դէն ի ձեռին դէմ դրաւ Հայ երիտասարդութիւնը:

ԶԷՅԹՈՒՆ, ամենաքաջն ու պանծալին բովանդակ Հայութեան մէջ, կանոնա-

ւոր զօրաց և անկանոն մարտիկներու քան զինքն քսանապատիկ մեծ բազմութեան մը զէմ դրաւ ամիսներով, և զՍուլթանը ստիպեց հաշտութեան դիմելու:

Իրողութիւնը սա է թէ Սուլթանը հրովարտակ հանեց իւր հաւատացելոց՝ բնաջինջ անել հայ ազգը, և սակայն ձեռնարկը չյաջողեցաւ շնորհիւ Հայոց զինեալ դիմադրութեանը:

Եթէ այդպէս է, պիտի առարկեն ոմանք, որքան Տաճիկ սպաննուած պէտք է լինէր Հայոց զէնքերէն: Ծջմարիտ է թէ Զէյթունէն զատ ուրիշ տեղ մահմետականք մեծաքանակ կորուստ չունեցան: Ասոր պատճառ կայ: Եւ սա է պատճառը որ Հայոց զէնքի պատրաստութիւնը և ջարդի ատեն ընթացքը՝ պաշտպանողական էր և ոչ յարձակողական: Հայք զէնքը գործածել ուզեցին միայն չսպաննուելու համար, ոչ թէ սպաննելու, և գործածեցին զէնքը միայն իբրեւ վերջին հնար՝ երբ իրենք սպաննուելու կետին հասած կը տեսնէին իրենք զիրենք:

Հայք իրենց կացութիւնը լաւ կը ճանաչէին. գիտէին թէ իրենց գործը լոկ թուրք ժողովրդին հետ չէր, այլ թուրք կառավարութեան և անոր կանոնաւոր բանակին և բոլոր համիտիյէ ու ոչ-Համիտիյէ գորութիւններուն հետ: Հետեւապէս կը հասկնային թէ թուրք ժողովրդին վրայ տանելու յաղթութիւնն ալ վայրկեանական միայն պիտի լինէր, զի նորա ետեւ պատրաստ կը կենային բանակ և թնդանօթ: Այս նկատողութեամբ է որ Հայք մեծ զգուշութեամբ գործածել ստիպուած էին իրենց զէնքը, այսինքն իբրեւ միջոց մը պաշտպանողական, որուն կցեցին հեռաւեսութիւն և համաճերատար տոկունութիւն, իբրեւ գին խաղաղութիւնը վերստին ձեռք բերելու:

Հայոց այս խաղաղասիրութենէն և խոհականութենէն ալ օգտուիլ ջանաց և օգտուիլ գիտցաւ թուրք կառավարութիւնը: Ամեն տեղ, քիչ կամ չատ գիմադրութիւն տեսնելէ յետոյ, թուրքը առաջարկեց Հայոց որ իբրեւ պայման խաղաղութեան և հաշտութեան՝ զէնքերը յանձնեն: Այս պայմանադրութեան անկեղծութեանը ըզ-Հայս հաւտացնելու համար խօսեցաւ ամեն սուտ, գործեց ամեն խաբէութիւն, երդուաւ յանուն սրբութեանցը, յանուն Ղուրանին և Մուհամմէտին և յարեւ թագա-

ւորին. և երբ Հայք հաւտացին ու զէնքը յանձնեցին, այն ատեն անոնց վրայ ինկաւ յանկարծ և ջարդեց: Նշանաւոր օրինակներ են Ուրֆայինը, Կիւրինինը, Ակինը, Իւիջի ալոց, որոց պատմութիւնը ծանօթ է անշուշտ ՀԱՅՔի պատ. ընթերցողաց:

Վերջապէս սա հասկցնել կ'ուզեմ թէ Հայոց արիւնէն արութեան հուրը մարած չէ, հին քաջութեան սիրտը կը կրեն նոքա տակուին: Բայց Հայք իրենց քաջութիւնը ցոյց տուին ինքնապաշտպանութեամբ, զի չունէին յարձակողական նըպատակ և յիսկաւք: Սուտ խօսեցաւ Համիտ երբ ջանաց զՀայ ներկայացնել Եւրոպիոյ իբրեւ ապստամբ և ընդվզեալ: Այդ սուտը խօսեցաւ նա՝ պատրուակելու համար իւր անզգամ ձեռնարկը: Եթէ Եւրոպա թրքին այս խաբէութեանը կը հաւատայ և անոր համար է որ իւր պարտքը չի կատարեր առ մեզ, գոնէ թող պապանձի և այլ ևս չյեղչեղէ միւս այն սըխալը կամ գրպարտութիւնը թէ Հայք նուաստ, անսիրտ և ստրուկ են: Արեւելքի մէջ դարերէ ի վեր Հայք կոխտուած են, բայց չեն ճմլուած. գերի բռնուած են, բայց չեն ստրկացած. զարնուած ու կոտորուած են բայց չեն եղած վատասիրտ, և իրենց ազգային արութիւնն ու քաջութիւնը պահպանած են: Թող Եւրոպա զայս գիտնայ և ըստ այնմ վարուի հայ ազգին հետ:

ԳՈՐԾՈՆ

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Ի — Stamford, Conn.

Տեղւոյս Հայ Գաղթականաց Թիւը
20 Բերրիցի

3 Ուզունոպացի

2 Բալուցի

1 Հավալցի

1 Խոյլըցի

1 Նոր Գիւղացի (Պարօ)

1 Թեգիրտաղցի

—
29

Ընդ ամենը առանց ընտանիքի որոնցմէ մէկ նպարավաճառ մէկ չաքարավաճառ և երկու ընկեր գարեջրավաճառ: Միւսները բոլորն ալ դործաւոր: Ուրախ եմ ըսելու որ պարապ մարդ չ'կայ աստ:

Ղազար Ա. Բ.

ԵՆԳԼԻՏԵՐԷՆԻ ԴԵՍԵՐ

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Թ.

Երբ զաղթանակն Ամերիկա հասնի, էլիս Այլէնտի պաշտօնեայք ի՞նչ հարցումներ կ'անեն սոսմ հասկնալու համար թէ մերս ընդունելու է կամ ետ ղրկելու է մարդկը:

Հարց. what is your name? (Հուսած ի՞նչ իւր նէյմ.) ինչ է անունդ:

Պատասխան. Թորոս Մանասեան (օրինակի համար)

Հ. How old are you? (Հառ օլտ ար եու.) Քանի՞ տարեկան ես:

Պ. Քսան տարեկան եմ (օրինակի համար. ճիշդ ասէ՛, մի՛ ասեր քսան—քսանէն հինկ տարեկան մը կամ:)

Հ. Are you married or single? (Ար եիւ մէ՞րրիտ օր սինկ.) Ամուսնացած ես թէ ամուրի:

Պ. Married (մէ՛րրիտ) եթէ ամուսնացած ես. single (սինկ) եթէ ամուրի ես:

Հ. What is your business? (Հուսած ի՞նչ իւր պիզնէս.) ինչ է գործդ:

Պ. Դերձակ եմ (օրինակի համար) կամ հողագործ...

Հ. can you read? (Քէն եու րի՞ս.) Կարդալ գիտե՞ս:

Պ. yes, sir. (ես, սըր.) Այո, Տէր իմ: Կամ No, Sir. (նո, սըր.) Ոչ, Տէր իմ:

Հ. what is your nationality? (Հուսած ի՞նչ իւր նէշնէլիթի.) ինչ ազգութեան կը պատկանիս:

Պ. Armenian (Արմի՛նեւն). Հայ:

Հ. where do you want to go? (Հուսած տու եու ուօնթ թու կօ.) Ո՞ւր երթալ կուզես:

Պ. To Boston (Թու Պոսթըն) ի Պոսթոն (օրինակի համար):

Հ. Have you any money? (Հէ՞լ եու էնի մընի.) Ստակ ունի՞ս:

Պ. Այո՛ կամ ոչ.

Հ. How much? (Հառ մըշ.) Ո՞րքան:

Պ. Twenty dollars (Թուէնթի տալըրս) Քսան տոլար (օրինակի համար):

Գրաչարութեան համար աշակերտ մը պէտք է «Հայք» համար. փափաքողը թող դիմէ խմբագրին, 341 West 23րդ փողոց:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ս. ԴԱԻԹԵԱՆԻ

ՏԱՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Աշխարհաբար Լեզուի, Դ. Տպագրութիւն 1896, էջ 48: — Նախնական կարգերու դիւրին և գործնական եղանակով կ'աւանդէ Հայ Լեզուին հիմնական օրէնքները եւ կը կանոնաւորէ աշակերտին լեզուն:

Մասնաւոր առաւելութիւններով օժտուած այս գրքովը մեծագոյն քաջալերութեան և հմուտ մասնագէտներու գնահատման արժանացած և սուղ ժամանակի մէջ ճասնեակ հազարներով սպառած է:

Գին 2 դաշ.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑԻ Աշխարհաբար Քերականութեան, Բ. Տպագրութիւն 1896, կրկնակ էջ 114: — Պէտք է կարդալ այս գրքին Յառաջաբանը ուր մանրամասն բացատրուած է Քերականութեան արուեստին նպատակը, մասնաւորապէս այս գրքին առաւելութիւնները և դասաւանդման եղանակը՝ որ շատ հրահանգիչ է: Ինչ պէտք կայ աշակերտին գոյ սորվեցնել քերականական կանոններ. հատուածներով և գործնական կրթութիւններով կրկնաբար լեզուին օրէնքներն ու սկզբունքներն ուսուցանել. այս է ահա Լրացուցիչի մէջ գործադրուած մեթոտը: Կը պարունակէ վերծանելի հատուածներ և անոնց անմիջապէս յաջորդող շահեկան և բազմազան հրահանգներու ճոխ միթերք մը:

Գին 3 դաշ.

Հասցէն է — M. Tavitian, Թիւ 16, Գաղասքէր խան, Պահճէ գարու, Կ. Պոլիս

ԵՅԼԵԻԵՅԼԻՔ

Կ. Պոլիս, Սեպտ. 11. — Սուլթանի հրամանաւ կազմուած է Յանձնաժողով մը, որ կը բաղկանայ երկու միւսիւլմանէ, երեք Հայէ և մէկ Յունէ, յայցելել այն Հայկական վիլայէթներն ուր Զարդերուն երեսէն ամենէն խիստ նեղեալներն կը գտնուին, և դրամ հաւաքել ի վերաշինութիւն դպրոցաց, եկեղեցեաց, վանորէից և որբանոցաց: Յանձնաժողովն անմիջապէս ճամբայ պիտի ելնէ:

Սեպտ. 13 ին Նիւ Եորքի առջեւ հասած են 170 Հայ դաղթական:

Միացեալ Նահանգաց Աշխատութեան Պաշտօնարանին վիճակագրոյն համեմատ, Նիւ եորք քաղաքում կան 27,000 ամուսնացած մարդիկ զորս իրենց կնիկներն կը ապրեցունեն :

Թապրիգէն Տէյլի Նիւգինյոլուած հեռագիր մը կը հաստատէ այն լուրը թէ սահմանագլխին վրայ ծանր կռիւ տեղի ունեցեր է Հայոց և Քրդաց միջև : Քուրդ այրուծիոյն հրամանատարը սպաննուած է, ըստ տեղեկագրոյ, և իւր որդին մազապուր խուսափած է : Քրդաց կորուստը, մեռեալ թէ վիրաւոր, 300 էն 600 կը դնեն : Հայերը կ'ասեն թէ իրենցմէ քսան հոգի միայն ինկած են :

Սիոնասէր Հրէից Համաժողովն ի Պաղէլ որոշեր է 10,000,000 լիրայի հանգանակութիւն մ'անել զՊաղեստին գնելու և Երուսաղէմի մէջ հրէական համալսարան մը հիմնելու համար :

Մանուկ Խաչատուրեան, Սերաստիոյ Գալտը գիւղէն, Հոկտ. 29ին եկած է Ամերիկա . ո՞վ որդիտէ այդ երիտասարդին ուրն, հաճի ծանուցանել հետեւեալ հասցէին :

Սահակ գուլագսրգեան, 82 Dickermann St., New Haven, Conn.

«Թուէս 5 տարի առաջ Ամերիկա եկած է բնիկ Մշոյ քաղաքէն, Միսիսիպի Երեմիան անուն երիտասարդ մը, այժմ հազիւ կայ 26—27 տարեկան, 3 տարի առաջ իւր նամակը առած եմ, 'ի կ'Պոլիս Ուստրքաղաքէն, և հիմայ Ամերիկա եկած՝ չգիտեմ ուր լինելը, կը խնդրեմ հայրենակիցներէ, որոնք որ ծանօթ են յիշեալ անձին, կամ տեղեկ եմ ուր գտնուելուն, թող հաճին տեղեկացնել ինձ, որ հօրեղոր որդի եմ, հասցէս է Յովհաննէո Գրիգորեան, 73 Common St., Lawrence, Mass.»

Շաքիր փաշա, Անատոլուէն հեռագրած է դրան թէ Սերաստիոյ մէջ կացութիւնը սպառնալից է, և թէ Հայկական յարոյթի մը երկիւղ կայ :

Փրոֆ. Ռամսէյ, Գոնթէմփօրէրի Ռիվի Թգոստոսի թուով, կ'առաջարկէ որ

Անգլիա երկրագործական վարժարան մը հիմնարկէ ի Կիպրոս, որպէս զի գոնէ այդու սատարած լինի Թուրքիոյ բարօրութեանը : Հեղինակը կը գովէ Հայոց երկրագործական յարմարութիւնը և Յունաց կ'ընծայէ արուեստի և ուշիմ աշխատաղաց ճաշակ :

Նիւ եորքի մէջ այս օրերս ձեռնարկուած է հիմնել մի «Բարեգործական Ընկերութիւն Հայոց», որու նպատակը պիտի լինի գաղթական Հայերու առաջնորդել գործ գտնելու և ապրուստ հայթայթելու, նաև, ի գալ առթին, մայր Հայրենիքի թշուառաց ալ նիւթական տառապանքը թեթեւելու ջանալ :

Նիւ եորքի նշանաւոր Հայ վաճառական Տիար Թաւաճանեան և Տիկինն իրենց ամուսնային ուղևորութենէն յետոյ ալ վերադարձած են ի Նիւ եորք :

Մ. Նահանգաց ամեն կողմէն մեզ հասած տեղեկութեանց համեմատ՝ Հայերը այժմ բաւական զբաղած են գործով :

«Արձագանգ» ի ուղղուած թղթակցութենէ մը կը տեսնենք թէ իբր քառասուն Հայ ուսանողներ կան այժմի Ժընէվ, Զուրիցերիա, մեծ մասամբ Տաճկաստանէն եկած : Եօթը ուսանող ալ ի Լոզան ունինք, որոց երկուքը օրիորդ են :

Սիրաքուսի մէջ տեղի ունեցած է առաջին Հայկական ամուսնութիւնը . Տիար Պայըրեան պսակուած է Օրիորդ Մարիամ Ֆէրանեանի հետ :

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍՏԸՆԻ

ԴԵԴԱՐՄԵՆԸ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ Էվընիւ, Մեծ Օրէրային Հանդէպ, 23 և 24 ըր փողոցներուն միջև :

Վստահելի դեղեր, բանաւոր գնելով կը ծախենք :

Ե. ԵՒ Մ. ԳԵՐԵԿԻՕ.ՋԵՆՆ

71 WALL STREET
NEW YORK

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկու վոխանակադիր Կ. Պօլսոյ վրայ: Բաշաքէն հեռու գտնուողք կարող են գրամը շրկելով փոխ-գիրը ստանալ:

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,
71 Wall Street,
New York, N. Y.

ՆԿՈՒՅՑԻ ՄԵՍԻՆ

SIEGEL . COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ Հասարակութեան ծանուցանել թէ մենք վերոյիշեալ տիեզերահռչակ մեծ վաճառատան առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ունինք ուր արուեստական ակռաներ կը շինենք ու կ'ընծայենք մեր յաճախորդներուն, թէ հասով, թէ վերի շարքը ամբողջ, թէ վերի ու վարի ծնօտներու ակռաները միասին: Մեր շինածը ամենալաւ, ամենազիւմացկուն տեսակէն է: Այն Հայ Տիկիները ու Պարոնները որ անգլիերէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր քով դիւրութիւն, վասն զի մեզի օգնական ունինք Հայ ատամնաբոյժ մը: Վերի ծնօտի ամբողջ շարքը ութ տողարով կը շինենք, վարինն ալ ութ տողարով: Մեր գները յոյժ չափաւոր են, ու գործը յոյժ ընտիր:

E. P. HAYES, D. D. S.

ՄՈՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՐՁԵԿ

ԱՄԵՆԱԼԱԻ ԱՊՐԱՆՔ

ԱՄԵՆԱԼԱԻ ՁԵՒՈՒԱԾՔ

ԱՄԵՆԱԼԱԻ ԿՍՐՈՒԱԾՔ

և

Գին

Չափաւոր:

ՀԱՍՏԷ—

DOWNING BUILDING

106 & 108 FULTON ST.

NEW YORK.

ՀԱՅՔ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԵՄՍԵԼՅ

Տարեկան բաժնեգրին է կանխիկ երկու տօլար (տասն ֆրանք)

Հասցին է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ի . Ս . Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն

